ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

—

Թագաւոր Կայսրը բարեհաճել է հետեւեալը հեռագրել Ամենայն Հայոց Կաթողիկոսին.

Լիվադիա, 14 հոկտ.

Նորին Սրբութիւն Կաթողիկոսին Ամենայն Հայոց.

Շնորհակալ եմ Ձեզ և յանձնարարում եմ հաղորդել Էջմիածնում տօնախմբութեան բոլոր մասնակիցներին Իմ շնորհակալութիւնս՝ աղօթքների և Ինձ արտայայտուած ամենահպատակ զգացմունքների համար։

ՆԻԿՈԼԱՅ

Այս հեռագիրը պատասխանն է Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետեւեալ հեռագրի.

Էջմիածին, 13 հոկտ.

Լիվադիա, Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրին.

Հայաստանում քրիստոնէական լուսաւորութեան հիմունքը դնող յաւերժայիշատակ ս. Մեսրոպի և Սահակի ձեռքով գտնուած հայ տառերի 1500-ամեակի և հայկական տպագրութեան 400-ամեակի յոբելեանական հանդէսներին Էջմիածնում ժողովուած հայ ժողովրդի բոլոր խաւերի, բարեգործական ու կրթական հաստատութիւնների ներկայացուցիչները ջերմ աղօթքներ վերառաքելով Ինձ հետ և ամբողջ միաբանութեան հետ միասին նախաթոռ տաճարում Ձերդ Կայսերական Մեծութեան և համայն Օգոստափառ Տան երկարակեցութեան ու երջանկութեան համար՝ առ ոտս Ձեր Մեծութեանն են արկանում ամենահաւատարիմ հպատակութեան և անսահման սիրոյ ու երախտագիտութեան զգացմունքներ։

Թող Ամենակարող Աստուած երկարէ Ձերդ Մեծութեան օրերը ի փառս քրիստոնէական եկեղեցւոյ և ի բարօրութիւն Մեծ Ռուսաստանի։

Գէորգ Կաթողիկոս Ամենայն Հայոց